

ԱԼԵՔՍԱՆԴԻ ՍԱՖԱՐՅԱՆ. Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, 300 էջ:

Վերջին տարիների թյուրքագիտության ձեռքբերումների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանի «Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները» մենագրությունը: Ինչպես նշում է հեղինակը, հայ թյուրքագիտությունը մինչև այժմ հպանցիկ է անդրադարձել Օսմանյան կայսրության փլուզման ու թյուրքական հանրապետության կայացման ժամանակահատվածում ծավալված լեզվական շինարարության, թյուրքականության գաղափարախոսության ու նրա «մշակութային բաղադրիչի» ձևավորման գործում Զիյա Գյոքալփի խաղացած դերին:

Հայ ընթերցողը Գյոքալփի ուսմունքին ծանոթացել է Զարևանդի դեռևս 1926 թվականին հրատարակած «Ինչ կծրագրին թուրքերը – Միացյալ անկախ Թուրանի» գրքի շնորհիվ: Գրախոսվող մենագրության հեղինակը անաչառ կերպով ներկայացնում է հայ այն գիտնականների վաստակը, որոնք զբաղվել են թե՛ Գյոքալփի գաղափարների ուսումնասիրությամբ, թե՛ ցեղասպանության և թե՛ թուրքիզմի, պանթուրքիզմի, պանիսլամիզմի գաղափարների վերլուծությամբ: Այդ երախտավորներից նա հատկապես հիշատակում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Հ. Միմոնյանի և Լ. Խուրշուդյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ՝ Ն. Հովհաննիսյանի, Ռ. Սաֆրաստյանի, պրոֆեսորներ՝ Հ. Ինժիկյանի, Ջ. Կիրակոսյանի, Ե. Սարգսյանի, Ռ. Սահակյանի և այլոց անունները. հիմնահարցով զբաղված գիտնականներից յուրաքանչյուրն իր առջև տարբեր խնդիր է դրել:

Իր առջև միանգամայն նոր խնդիր է դրել Ալ. Սաֆարյանը: Նա վերցրել է դարաշրջանի թյուրքական քաղաքական ու մշակութային կյանքի կենտրոնում կանգնած մի հեղինակի՝ Զիյա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները» աշխատությունը և այն ենթարկել պատմաբանասիրական բազմակողմանի քննության:

Գրախոսվող մենագրության առաջին գլուխը նվիրված է Գյոքալփի «Օսմանյան մոդելի» քննադատությանը, թուրքերենի ու թուրք գրականության պատմության հիմնահարցերի լուսաբանմանը, թյուրքականության գաղափարախոսության հիմնադրույթների մեկնաբանմանը: Երկրորդ գլխում քննարկվում են Գյոքալփի առաջադրած ազգային կրթության և դաստիարակության, երրորդում՝ «թուրքական ֆեմինիզմի» հիմնահարցերը: Չորրորդ գլխում Ալ. Սաֆարյանը շեշտված հետևողականությամբ քննարկում է Գյոքալփի տնտեսագիտական հայացքները:

Հայտնի է, որ թուրք հանրային կյանքի վերափոխման հախուռն այս պատմաշրջանում (XIX դարավերջ և XX դարի առաջին երկու տասնամյակներ) ձեռնարկված արմատական միջոցառումները ամբոխից քաղաքական ազգ կերտեցին: Եվրոպական ժողովուրդների բոլոր նման արմատական անցումային շրջանների, ասենք՝ անտիկ, վերածննդի, լուսավորիչների և վաղբուրժուական հեղափոխությունների ու ժամանակակից ազգերի ձևափոխման մասին մենք բավարար գիտելիքներ ենք ստանում դեռ դպրոցական դասագրքերից: Իսկ դարերով մեզ վրա իշխած թշնամու, մեր դեմ մերկացած սուրը պարզաձևերի ներքին կյանքի մասին քիչ գիտենք: Ահա թե մեզ անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման համար ինչպիսի դաշտ է ստեղծում Ալ. Սաֆարյանը՝ այս շնորհակալ ձեռնարկումով:

Պրոֆ. Սաֆարյանը քաջ գիտակցում է, որ Գյոքալիքը առաջին պլան մղելով թուրքերի՝ նոր ձևավորվող ազգային ինքնագիտակցության զարթոնքի գործոնը, ակնհայտ անհանդուրժողականություն է քարոզում Օսմանյան կայսրության կողմից նվաճված ազգերի նկատմամբ: Ներկայացվող մենագրության հեղինակը համոզիչ փաստերով, գիտականորեն է հերքում Գյոքալիքի հիմնական դրոյթները: Անդրադառնալով թուրքալեզու ժողովուրդների համար միասնական գրական լեզու ստեղծելու Գյոքալիքի պահանջին՝ Ալ. Սաֆարյանը անհերքելի փաստերով հիմնավորում է, որ այդ գաղափարները ոչ միայն գործնականում, այլև տեսականորեն իրագործելն անհնարին է այն պարզ պատճառով, որ թուրքական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդներն ունեն ուրույն մշակույթ, նորավորված գրական լեզու, և նրանցից ոչ մեկը, անկախ քաղաքական ու էթնիկական շահերի հետապնդումից, այնուամենայնիվ, իր ազգայինը կորցնելու ջանքերուն չունի: Ինչպես նշում է Ալ. Սաֆարյանը, Գյոքալիքի «Թուրքականության հիմունքներում» ակնհայտորեն փորձում է շրջանցել կիրգիզների, ղազախների, կարակալպականների, ուզբեկների, թուրքմենների ծագումնաբանության ու լեզվամշակութային առանձնահատկությունների թեման, արհամարհել արդեն XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին ղազախներեն գրքերի ու պարբերականների հրատարակության փաստը, անտեսել ղազախ լուսավորիչների, ուզբեկական ու թուրքմենական գրականության դասականների, Կենտրոնական Ասիայի թուրքալեզու ժողովուրդների դեմոկրատատավորականների ազգանվեր ու արգասաբեր գործունեությունը: Այսօր, Գյոքալիքի ապրած ժամանակներից հարյուր տարի անց, ընդգծում է հետազոտողը, ղազախների, ուզբեկների, կիրգիզների, թուրքմենների ազգային՝ պետականի կարգավիճակ ստացած լեզուները բարբառներ որակելն անհեթեթ ու վիրավորական են համարում այդ ժողովուրդների նույնիսկ այն մտավորականները, ովքեր որոշակի համակրանք են տաժում դեպի համաթուրքականությունը:

Անդրադառնալով Թուրքիայում գյոքալիքյան ուսմունքի կիրառության խնդրին՝ Ալ. Սաֆարյանը նկատում է, որ Գյոքալիքի ուսմունքը ոչ միայն կանխորոշեց թուրքական սոցիոլոգիական, քաղաքագիտական, լեզվաբանական ու տնտեսագիտական մտքի հետագա զարգացումը, այլև տեսական հիմք ստեղծեց Մուստաֆա Քեմալի բարեփոխումների իրականացման համար: Գյոքալիքի տնտեսագիտական հետազոտություններում առաջադրված գաղափարները նույնպես կիրառվել են Քեմալի և նրա հարջորդների կողմից:

Ուսումնասիրողներին առավելապես հետաքրքրել են թուրքականության ընդգծված հակահունական ու հակահայկական ուղղվածության երկրաքաղաքական, պատմամշակութային, էթնիկական ասպեկտները: Տնտեսական հետապնդումների ու դրանց թողած հետևանքների մասին քիչ է գրվել: Հայտնի է, որ Գյոքալիք բացառիկ կարևորում էր էտատիզմի քաղաքականությունը, տնտեսությունը «թուրքացնելու» հիմնախնդիրը: Բազմազգ Օսմանյան կայսրությունում տնտեսավարող գործարարները հիմնականում հույները, հայերը և հրեաներն էին: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կայսրությունում հունական կապիտալը կազմում էր հիսուն, հայկականը՝ քսանհինգ տոկոս: Թուրքական բուրժուազիան իր երկրում գրավում էր ընդամենը չորրորդ տեղը: Պարզ է, որ գյոքալիքյան էթնոկենտրոն տնտեսագիտական հայեցակարգը ծրագրում էր պետականորեն հափշտակել հենց հունական ու հայկական կապիտալը, բնականաբար, կոտորելով սեփականատերերին:

Գրախոսվող մենագրության հեղինակը, փաստորեն, բացահայտում է թուրքականության դրսևորման բազում ծայրեր՝ սոցիալական, քաղաքական, պատմական, տնտեսական, մանկավարժական, լեզվաբանական, գրականագիտական ոլորտներում, ամբողջական պատկերացում է ձևավորում ընթերցողի մոտ Հայոց ցեղասպանության խորքային ընկալման համար: Նա նաև ներկայացնում է թուրքական կառավարող շրջանների այն ձեռնարկումները, որոնց հետևողական կիրառման շնորհիվ երբեմնի

հետամնաց Թուրքիան զարգացման ուղեծիր դուրս եկավ: Այս ուշագրավ մենագրության մեջ առաջադրված և լուծված հիմնախնդիրների բազմազանությունը, հեղինակի բազմաթիվ հղումներն ու արժեքավոր ծանոթագրությունները մեզ ներկայանում են որպես ժամանակակից թուրքագիտության համապարփակ հանրագիտարան: Ակադեմիական իր բարձր որակների հետ սույն մենագրությունը նաև ուսուցողական նպատակներ է հետապնդում: Այնտեղ ներկայացվում են Գյոքալփի և թուրքական այլ աղբյուրների թուրքերեն բնագրերը ու դրանց հայերեն թարգմանությունները, որոնք, բնականաբար, երիտասարդ թուրքագետներին կօգնեն հասկանալու բարդ տեքստերը:

Մի կարևոր առաքելություն ևս ունի քննարկվող մենագրությունը. այնտեղ քաղաքական մերկայարանոց հայտարարություններ, պաթետիկ հարցադրումներ,

հակաթուրքական կոչեր չկան, այնտեղ կան թուրքագետ գիտնականի սթափ մտքեր, այդ մտքերի փաստառատ հիմնավորումներ, աշխարհի թուրքագետների և օսմանագետների արտահայտած թեր ու դեմ կարծիքներ: Շարադրանքի նման ոճը Հայոց ցեղասպանության հարյուրամյակի նախօրեին հայ-թուրքական երկխոսության համար կարող է բարենպաստ իրավիճակ ստեղծել, նպաստել թուրքերի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը:

Այլ Սաֆարյանի տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող այս աշխատության հրատարակմանն իրենց նպաստն են բերել գրքի հրատարակության գիտական խմբագիրներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Ա. Միմոնյանը և Ռ. Սաֆրաստյանը, գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը, պրոֆ. Հ. Էդոյանը, դոց. Ռ. Մելքոնյանը:

ՀԵՆՁԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ